ԿԱՐԾԻՔ

Բենիկ Ալեքսանդրի Երիբեկյանի «Իրականության և տեղեկատվության ձևախեղմանն ուղղված մանիպուլյացիայի ազդեցությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա» թեմայով հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման /ԺԹ.00.03. - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ/ ատենախոսության վերաբերյալ

Բենիկ Երիբեկյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից հասարակության մեջ մանիպուլյատիվ տեխնոլոգիաներին ու դրանց հետևանքներին: Ներկայիս համաշխարհային գործընթացները, հասարակական և մշակութային փոխակերպումները, գլոբալիզացման և թվայնացման պայմանները ի հայտ են բերում մանիպուլյատիվ ներգործության նոր հնարավորություններ և մեխանիզմներ, որոնց ուսումնասիրումը կարևոր է ինչպես անձի, այնպես էլ սոցիալական խմբերի մակարդակներում:

Հեղինակի կողմից իրականացված սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունները առավելապես կապված են այն իրողության հետ, որ հասարակության յուրաքանչյուր անդամի տեղեկատվական իրազեկվածությունը ընդլայնվել է, որի արդյունքում, կարող է փոփոխվել իրականության ընկալումները, սոցիալական դիրքորոշումները և այլն: Այս առումով մեծ դեր ու նշանակություն է ստանում մանիպուլյատիվ ներգործությամբ տեղեկատվության ձևափոխված ընկալումների հիմնախնդրի ուսումնասիրումն ու նորովի մեկնաբանությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ բավարար մշակված և համակարգված չեն իրականության և տեղեկատվության ձևախեղմանն ուղղված մանիպուլյացիայի ազդեցությանը վերաբերող հարցերը, այն պայմանավորող գործոնները:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել մանիպուլյացիայի ներգործությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա իրականության վերաբերյալ տեղեկատվության ձևախեղման համատեքստում՝ կապված կոգնիտիվ ոլորտի ոճերի և առանձնահատկությունների հետ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից (որտեղ հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված է վարկածը, աշխատանքի նպատակը, խնդիրները, ներկայացված են տեսամեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները), հիմնախնդրի տեսական վերլուծության երկու գլուխներից, (որտեղ մանրակրկիտ տեսական վերլուծության է ենթարկվում մանիպուլյացիայի սոցիալ-հոգեբանական մեխանիզմները, մանիպուլյատիվ ներգործության տեսակներն ու մեթոդները և այլն), հիմնախնդրի հետազոտական փորձարարական ուսումնասիրման ու վերլուծության մեկ գլխից, եզրակացություններից, որոնք ունեն տրամաբանական հաջորդականություն և տեսականորեն շախկապված են: Աշխատանքը շարադրված է 141 համակարգչային էջի վրա: Օգտագործված գրականության ցանկը կազմված է 239 գրական աղբյուրներից և ներառում է ինչպես նախկին, այնպես էլ ժամանակակից աղբյուրներ տարբեր լեզուներով, որոնցում լիովին արտացոլված են ուսումնասիրվող հիմնահարցերը:

Հետազոտության հիմնական արդյունքների հավաստիությունն ապահովվում է օգտագործված տեսական դրույթներով, ընթացիկ և վերջնական արդյունքների քանակական մշակման վիճակագրական մեթոդներով:

Բ. Ա. Երիբեկյանի աշխատանքն արժեքավորվում է ընտրված հետազոտական բազմաբնույթ մեթոդներով ու մեթոդիկաներով: Ատենախոսական աշխատանքի հետազոտական ասպեկտը հստակ հիմնավորված է հեղինակի կողմից, էմպիրիկ հետազոտությունը կազմակերպվել է համաձայն պահանջներին, մեթոդական համալիրը ընտրված է նպատակին և խնդիրներին համապատասխան: Ընդ որում հեղինակի կողմից հետազոտության ընթացքում կիրառվել են մեթոդներ՝ հարցում, թեսթավորում, գիտափորձ: Վերլուծության մեթոդներ են հանդիսացել բովանդակային վերլուծությունը տեղեկատվության ընդհանրացմամբ և խմբավորմամբ, մաթեմատիկական վիճակագրական վերլուծությունը՝ առաջնային նկարագրական վիճակագրություն (միջին արժեք, դիսպերսիա) և կոռելյացիոն վերլուծություն:

Էմպիրիկ տվյալների համեմատական վերլուծությունը ստացված տվյալների միջև դուրս բերեց հասարակական կարծիքի փոփոխության միտում՝ արտաքին միջավայրի ազդեցության կախվածության և սոցիալական վստահության բարձր դրսևորման միջև առկա կապերով պայմանավորված: Ընդ որում հեղինակը բացահայտել է, որ զանգվածային սոցիալ-հոգեբանական ընկալումների

աղճատումներին նպաստում են կոգնիտիվ իմպուլսիվ և սինթետիկ ոճերի շեշտվածությունը, ինչպես նաև՝ որոշումներ կայացնելու ռեֆլեկտիվ կամ անալիտիկ ոճերը:

Հետազոտության վերլուծության բոլոր փուլերում հեղինակը ցուցաբերել է բազմակողմանի գիտական հիմնավորումներ հոգեբանության, սոցիալական հոգեբանության ժամանակակից պահանջներին համապատասխան: Տեսական և էմպիրիկ նյութի ընդհանրացման հիման վրա աշխատանքի հիմնական արդյունքները ամփոփվել են եզրակացություններում: Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները արտացոլված են հեղինակի ատենախոսության սեղմագրում և հոդվածներում:

Աշխատանքի մանրակրկիտ ուսումնասիրությունը բացահայտեց որոշ վրիպումներ և թերացումներ, այսպես

1. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը տեսական և հետազոտական ուսումնասիրությունների ու դրանց վերլուծությունների արդյունքում ներկայացներ գործնական առաջարկներ:
2. Որո՞նք են ընտրակազմի ընտրության հիմքերը, ինչո՞վ կհիմնավորեք ընտրակազմը, և դրա դասակարգումը ըստ ենթախմբերի:
3. Աշխատանքը հարուստ է մաթեմատիկական վիճակագրական վերլուծությամբ, ինչպես նաև համահարաբերակցային վերլուծություններով, սակայն սահմանափակ է ստացված տվյալների բովանդակային ու որակական վերլուծությունը:
4. Աշխատանքում նշված չէ թե ի՞նչ տևողություն է ունեցել գիտափորձը և ընտրաքից քանի՞ հոգի են մասնակցել գիտափորձին:

Սակայն վերը նշված դիտողությունները ոչ մի կերպ չեն արժեզրկում ատենախոսության նշանակությունն ու բովանդակությունը: Մեր կարծիքով դրանց հաշվառումը միայն կնպաստի աշխատանքի համապատասխան ձևակերպմանը և կբարձրացնի նրա արժեքը:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ **Բենիկ Ալեքսանդրի Երիբեկյանի «Իրականության և տեղեկատվության ձևախեղմանն ուղղված մանիպուլյացիայի ազդեցությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի

կողմից ԺԹ.00.03. - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին և հեղինակը արժանի է հավակնած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ն. Ա. Հարությունյան _____

ԵՊՀ գիտ. քարտուղար
Մ. Հովհաննիսյան _____

ք. Երևան ,,12,, հունվարի 2024 թ.